№ 75 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 2 **1894** ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 2 № 75

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքահայերի ազգային ժողովը. Անարժան հակառակորդներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընտրութիւնների շուրջը. Դպրոցական հողաբաժիններ. Նամակ Պետերբուրգից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Կաղիմիր Պէրիէ և արմատականները. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ գաղթականները:

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

—

Կ. Պոլսից ստացած ամենավերջին տեղեկութիւնները ուրախալի չեն, այլ, ընդհակառակն, վերին աստիճանի տխուր:

Պատրիարքարանը բոլորովին անտէր է. կրօնական և քաղաքական ժողովները, որոնք մի և նոյն ժամանակ և խառն ժողովն են կազմում, բաղկացած է մեծ մասամբ այնպիսի երկչոտ, աննշան և անընդունակ անձինքներից, որոնք չեն էլ մտածում հարց յարուցանելու՝ ազգային ժողովը գումարելու մասին:

Ուրեմն ո՞վ պէտք է հրաւիրէ ազգային ժողով:

Պատրիարքը?—Նա այդ չէ ուզում անել: Խառն ժողովը?—Նա անկարող է և չէ էլ կամենում անել:

Իսկ միւս կողմից էլ պատրիարքական գահի թեկնածուները, մանաւանդ տխրահռչակ Բարթուղէմիոս եպիսկոպոսը, արդէն ամեն միջոցներին են դիմում, որպէս զի ազգային ժողով չը գումարվի, որովհետև այդ ժողովը, ինչքան էլ երեսփոխանների մեծ մասը անընդունակ և նոյն իսկ կաշառվող մարդիկ լինեն, այնու ամենայնիւ, աւելի անկախ, աւելի բարեխիղճ ընտրութիւն կանի, քան թէ մի խումբ մարդկանցից բաղկացած խառն ժողովը:

Այդպիսով մի կողմից՝ մի քանի ուժեղ մարդիկ, և նոյն իսկ պատրիարքական գահի թեկնածուներ աշխատում են թոյլ չը տալ, որ ազգային ժողով գումարվի, իսկ միւս կողմից՝ քաղաքական և կրօնական ժողովի անդամները անընդունակ և անկարող են դիմադրել այդ ապօրինի և վտանգաւոր ձգտումներին, և բոլորովին այժ չունեն պնդելու, որ անպատճառ պատրիարքի ընտրութիւնը կատարվի սահմանադրութեան համաձայն, այսինքն ազգային ժողովի ձեռքով:

Արդ՝ ինքն ըստ ինքեան հարց է առաջ գալիս. ո՞վ պէտք է ազգային ժողով գումարի:

Այդ հարցին կը պատասխանենք միւս անգամ:

ԱՆԱՐԺԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

—

Շուտով բոլորովին զզուելի կը դառնայ մեր հակառակորդների հետ գործ ունենալը: Այդքան գաղափարական դատարկութիւն, այդքան ծայրահեղ կեղծիքներ, այդքան անբարոյական վարմունքներ, որ նրանք ցոյց տուին վերջին տարիներս, աւելորդ են դարձնում նրանց հետ վիճելը, մտքերի փոխանակութիւն կատարելը:

Դրանք ի՞նչ հակառակորդներ են:

Այսօր ստիպված ենք մերկացնելու նրանց ամենատոր գործերը, վաղը ցոյց տալու, որ նրանք մի հասարակ եղելութիւն կեղծել են և պատմում են բոլորովին այլանդակած, երրորդ օրը արձանագրելու, որ նրանք յեղաթիւրել են ձեր խօսքերը, չորրորդ օրը յայտնելու, որ նրանք շողոքորթել են այս կամ այն անձին, հինգերորդ օրը ապացուցանելու, որ նրանք ձեռք են դարկել նոյն իսկ այնպիսի միջոցների, որոնք քրէական բնաւորութիւն են կրում և այլն և այլն:

Իսկ ո՞ւր մնացին գաղափարները:

Կարծես այդ մարդիկ երբէք չեն ունեցել գաղափարական շահեր, գաղափարական դիտաւորութիւններ: Որչափ և ցանկանում էք նրանց վէճերի, խօսած-գրածների մէջ գտնել գաղափարական հիմունքներ, որպէս զի քննական կերպով, համոզելով, ապացոյցներ բերելով պարզէք հասարակութեան համար տեսակէտների տարբերութիւնը և ձեր հայեացքի առաւելութիւնը, լուսաբանէք իրերը այն ձևով, որ հասարակութիւնը ըմբռնի ճշմարտութիւնը, բայց հազար և երրորդ անգամ համոզվում էք, որ նրանց նպատակը—գաղափարական չէ, որ նրանց համար չը կայ արդարութիւն որոնելու ցանկութիւն, որ նրանց ամեն մի խօսքը, ամեն մի տողը կեղծիքներ են, խորամանկութեան և ճարպիկութեան նմուշներ:—Զարմանալի չէ՞, որ տարիների ընթացքում նրանք չը կարողացան մի գաղափար առաջ բերել, որին պաշտպան հանդիսանային սիստեմատիկաբար, ասպետական քաջութեամբ:

Զզուելի է. նրանք թոյլ են տուել իրանց այնքան ստոր գործեր, այնքան արատաւորել են իրանց անունները, որ ամեն օր միայն այն էք լսում, թէ ինչպէս նրանք միմեանց ուրանում են, միմեանց խայտառակութիւնից խորշում են, և չը գտնելով արդարանալու ոչ մի ձև, կրկնում են, որ նրանք միմեանց հետ համերաշխ չեն, որ միմեանց ատում են, որ իրանք վճռել են բոլորովին հեռանալ այն անձերից, որոնք կուսակցական ներկայացուցիչներ են նրանց շրջանում: Անցնում են օրեր և դարձեալ տեսնում էք նրանց միասին խմբված, միասին միջոցներ որոնելիս ինչ որ կուսակցական նպատակների համար, մինչև որ նոր խայտառակութիւններ, նոր կեղծիքներ, նոր այլանդակութիւններ ստիպում են դարձեալ միմեանց հետ կռուել, միմեանցից զզուել և հեռանալ:

Բաւական է վերջապէս: Եթէ կան ձեր մէջ համոզված գաղափարական մարդիկ, որոնք ունեն առանձին հայեցակէտեր, սեփական տեսակէտներ, թող շտապեն օր առաջ մաքրելու իրանց շրջանը այնպիսի անձերից, որոնք արատաւորել միայն կարող են այդ շրջանը: Եթէ ունէք սիրելի գաղափարներ, պահեցէք նրանց իդէալական մաքրութեան մէջ, որպէս զի կարելի լինի ազնիւ վէճի, զրական, հասարակական մաքուր քննադատութեան առարկայ շինել նրանց:

Այլապէս անկարելի կը լինի ձեզ հետ գործ ունենալը, ձեզ հակառակորդներ անուանելը: Հակառակորդի մէջ մարդ որոնում է գաղափարի ներկայացուցիչ. իսկ նա ով կեղծում է, խաբում է, ստում է, յեղաթիւրում է, ամեն օր իր ասածը ուրանում է, նա արդէն չարագործ է, որի հետ վիճել աւելորդ է և որին միայն պէտք է մերկացնել, միայն զինաթափ անել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

IV

Էլի մի քանի վերընտրութիւններ վաղը, և յոյս ունենք դրանով ընտրութիւնների հարցը կը վերջանայ: Կարծում ենք ժամանակ է, որ Թիֆլիսի սրբազան առաջնորդը վերջ դնի չինծու, մութ անկիւններում, քահանաների ձեռքով գրած բողոքներին և նշանակի հոգաբարձական ընտրութեան օրը:

Հոգաբարձուների ընտրութիւնը կը կատարվի, գործը իր կարգով առաջ կերթայ, կեանքը նորից կը մտնի իր սովորական շաւղի մէջ, —և այնուհետև մեր եղուխները և լրագրական խաչագողները որքան կամենում են թող կոկորդելոսի արատաւոր թափեն, ողբան իրանց սև օրը, իրանց սև բաղդը...

—

Կը խօսեն, կը մրոտեն թղթերը, կը յոգնեն անօգուտ նամակներ գրելուց, կը մաշեն սրա նրա չէմքը, և վերջի վերջոյ կը հանգստանան:

Այդպէս է եղել միշտ.—մի գեղեցիկ օր, երբ այդ ողորմելի տարրը դուրս վռնդվեց Հրատարակչական ընկերութիւնից, էլ ինչ հայհոյանքներ, ինչ գարշելի հայհոյանքներ ասէք. որ չը թափեցին ընկերութեան գլխին, նրա ղեկավարների վրա, գոչելով՝ «Հասէք, եկէք, ընկերութիւնը վտանգի մէջ է»:

Բայց ընկերութիւնը անվրդով առաջ գնաց, սկսեց գործել.—և հակառակորդները խայտառակված լռեցին:

Մի ուրիշ անգամ, երբ ամսթահար դուրս չը պրտվեցին Բարեգործական ընկերութիւնից՝ իրանց մեռելութեան համար, կրկին սկսեցին դոռալ. «Ափսոս ընկերութիւն, կը կորչի, կը ոչնչանայ»:

Ղօշաքիլիսա գիւղի քահանայի տանը. սակայն չը նայելով իրանց տեսած խնամքին, կարծելով, թէ աւելի գութ և խնամք կը գտնեն իրանց դատանակիցների մէջ՝ դեկտեմբերի 4-ին եկան Ղարաղալա: Նրանք 24 հոգի էին: Նրանցից ոմանք հիւանդ էին, երեխաների մերկ ոտները ցրտից փետացել, երկար ժամանակ չարաչ էր հոսում:

Չը նայելով այդպիսի ողորմելի դրութեանը՝ գիւղի հարուստները հետեւալ օրն և եթ առաջարկեցին դրանց գիւղից դուրս գնալ և իրանց տարդ վարմունքը բացատրելու համար պատճառ բերին, որ գիւղի լուսաւորչականները հակառակ են նրանց մնալուն: (Փակագծի մէջ ասենք, որ 36 տնից բաղկացած Ղարաղալա գիւղում, բացի մեծամասնութիւն կազմող բողոքականները՝ կան նաև լուսաւորչական, պրիգուն և եհովական հայեր): Գործը ընկաւ թասիրի, լուսաւորչական և եհովական հայերը նրանց համար տուն վարձեցին, բայց հարուստները ճնշում գործելով՝ արգելեցին տանտիրոջը՝ վարձով տալ իր տունը: Բողոքականները նկատելով, որ գաղթականներին պաշտպանողները կամենում են տեղաւորել նրանց իրանց տան մէջ և տեսնելով, որ անկարելի է գաղթականներին արտաքսել՝ խսկոյն և եթ փոխեցին իրանց տակտիկան և որպէս զի գաղթականներին պահպանելու անունը ուրիշներինը չը լինի, սկսեցին դրամ և հացահատիկ նուիրել և այդպիսով ակամայից ստիպվեցան պահել նրանց մինչև գարուն: Գարնանը դրանց վարձեցին նախրչի:

Յունիսի 13-ին հարուստներից մէկի մատակը

կապտագոյն չերտ գծեց.—այդ ժամանակ ես տեսնում էի միայն հալածանքներ և եթէ իմ ձեռքումը լինէր՝ ես կոչնչացնէի բոլորին, որոնք աղատութիւնից զրկված թշուառին ծեծում էին...

Այդ ժամանակից անցել են 25 ձիգ տարիներ, բայց մանկական տպաւորութիւնը այնքան վառ հեւանք է թողել, որ ամեն անգամ հաւանման դէպքեր տեսնելիս՝ իմ աչքերի առաջ պատկերանում է վաղեմի տեսարանը՝ իր ամբողջ պայծառութեամբ: Կարող էի, արդեօք, ընթերցող, այն ժամանակ երևակայել, թէ մի օր ներկայ պէտք է լինեմ և իմ եղբայրակիցների թշուառութեանը, պէտք է տեսնեմ նրանց խմբովին գաղթը անհիւրասէր մայր երկրից... Զափազանց քաղաքիրտ պէտք է լինի մէկը, որ անզգայ մնայ, տեսնելով գաղթականների այս անընդհատ հոսանքը, որ անընդհատ կարաւանով թափվում է դէպի Կարսի կողմերը:

Կիսամերկ, բոկոտն, քաղցած շարժվում է գաղթականների խումբը. փոքրահասակները հազիւ քարշ են տալիս իրանց ոտիկները, թշուառ մայրերը աշխատում են միւսներից յետ չը մնալ. նրանց քամակին կապած են ծծկեր մանուկներ, որոնց կականը օդն է թնդացնում. անշուշտ ողորմելիները ընութեան անարուեստ ձայնով կերակուր են խնդրում, իզուր կամենալով ստանալ իրանց մայրերի ցամաքած սիսկներից...

Ո՛ւր ես դիմում, խեղճ ժողովուրդ, սովը, հալածանքը, անտեսական անտանելի պայմանները ստիպել են քեզ թողնել մայրենի մոխրակոյտը և օտար երկնքի տակ անդորրութիւն որոնել: Բայց ոչ, մի սխալվի, քեզ համար անդորրութիւն, հանդիստ չը կայ. ճակատագիրը քեզ դատապարտել է վշտակրութեան. քեզ վիճակ է ընկել չարչարանքի՝ բաժակ, դու պիտի խմես այդ դառն բաժակը, անոք և անօգնական պիտէ շրջեցնես քո տարաբաղդ գլուխը և ով գիտէ որտեղ յաւիտենական պիտի հանդչեցնես նրան: Ռուսաստանաբնակ քո ազգակիցը այս տարի նոյնպէս տառապում է սովից, իսկ վաչխառուի ճիրաններից—միշտ. նա ես այսօր կարօտ է մի պատառ հացի, բայց վկայ է Աստուած, որ այդ մի պատառ հացն ես իր փոքրիկների բերանից խլելով, կիսում է քեզ հետ, և դու, հայ մարդ, հայ գաղթական, դեռ կամենում ես օտարի դռները բաղխել... Եւ արդարև, զարմանալի է, թէ որքան մարդասիրական զգացմունքով Կարսի վիճակի հայ ժողովուրդը պատսպարում և կերակրում է իր գիւղերում թափված գաղթականների ամբողջ տները: Անցեալ ձմեռ կային գիւղեր, որոնց մէջ գաղթականների թիւը աւելի շատ էր գիւղացիների թիւից:

Մի գիւղ միայն մարդասիրական զգացմունքից դուրս, անհիւրասէր յայտնվեց դէպի գաղթականները.—այդ գիւղը հայ-բողոքականներով բնակեցրած Ղարաղալան է: Դրանք, որ կեղծօրէն պարծենում էին, թէ իրանք ցաւակից են ազգի ցաւերին, ոչ միայն լուսաւորչական, այլ և բողոքական գաղթականներին չը կամեցան հիւրասիրել իրանց գիւղում: Անցեալ տարվայ աշնանը, ի միջի այլոց, խնուս գաւառակի Զաւուրմա գիւղից դուրս եկան մի խումբ բողոքական գաղթականներ, որոնք Կովկասի սահմանը անցնելով՝ հիւրընկալութիւն գտան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

—

Վաթսունական թւականներին դեռ ես փոքր մանուկ էի, երբ սարեցիներին դաղթեցնում էին Ցաճկաստան: Դեռ այսօր էլ լաւ յիշում եմ այն հսկայադէմ տղամարդկանց, աղատ ընութեան որդիներին, յիշում եմ նրանց ընտանիքը, որոնք տխուր ու տրտում դիմում էին դէպի օտարութիւն, հեռու այն հարազատ լեռներից, որոնք ներկայ էին եղել բազմաթիւ հերոսական գործերի... Մեծ և փոքր, ծեր և երիտասարդ, շատերի շորերը ղղղված, մաշված, մի յուսահատ հայեացք գցելով շուրջը՝ շարունակում էին իրանց յոգնատանջ ուղին: Ջինուորների ստուար շղթան շրջապատել էր նրանց և շտապեցնում էր...

Ես դեռ ես մանուկ էի, ինձ համար անծանօթ էին քաղաքական դարձուածքները՝ ես անտեղեակ էի, թէ ինչպէս վաթսունամեայ հերոսական դիմադրութեան միջոցին, նոյն այդ՝ այժմ կալանաւորները, կամ դրանց նախնիքը դուցէ սպանել էին ուղեկցող զինուորների մերձաւորներին. ես տեսնում էի միայն ներկան՝ մի յոգնած, ջարդված, գերի ընկած ժողովուրդ. տեսնում էի յոգնածութիւնից հազիւ քարշ եկող մանուկներին, աղջիկներին. տեսնում էի, թէ ինչպէս մարակը բարձրացաւ և իջնելով մի ծերունու, երիտասարդի, նոյն իսկ մի կնոջ կիսամերկ ուսերին՝ մի

ոչ, մի սխալվի, քեզ համար անդորրութիւն, հանդիստ չը կայ. ճակատագիրը քեզ դատապարտել է վշտակրութեան. քեզ վիճակ է ընկել չարչարանքի՝ բաժակ, դու պիտի խմես այդ դառն բաժակը, անոք և անօգնական պիտէ շրջեցնես քո տարաբաղդ գլուխը և ով գիտէ որտեղ յաւիտենական պիտի հանդչեցնես նրան: Ռուսաստանաբնակ քո ազգակիցը այս տարի նոյնպէս տառապում է սովից, իսկ վաչխառուի ճիրաններից—միշտ. նա ես այսօր կարօտ է մի պատառ հացի, բայց վկայ է Աստուած, որ այդ մի պատառ հացն ես իր փոքրիկների բերանից խլելով, կիսում է քեզ հետ, և դու, հայ մարդ, հայ գաղթական, դեռ կամենում ես օտարի դռները բաղխել... Եւ արդարև, զարմանալի է, թէ որքան մարդասիրական զգացմունքով Կարսի վիճակի հայ ժողովուրդը պատսպարում և կերակրում է իր գիւղերում թափված գաղթականների ամբողջ տները: Անցեալ ձմեռ կային գիւղեր, որոնց մէջ գաղթականների թիւը աւելի շատ էր գիւղացիների թիւից:

Մի գիւղ միայն մարդասիրական զգացմունքից դուրս, անհիւրասէր յայտնվեց դէպի գաղթականները.—այդ գիւղը հայ-բողոքականներով բնակեցրած Ղարաղալան է: Դրանք, որ կեղծօրէն պարծենում էին, թէ իրանք ցաւակից են ազգի ցաւերին, ոչ միայն լուսաւորչական, այլ և բողոքական գաղթականներին չը կամեցան հիւրասիրել իրանց գիւղում: Անցեալ տարվայ աշնանը, ի միջի այլոց, խնուս գաւառակի Զաւուրմա գիւղից դուրս եկան մի խումբ բողոքական գաղթականներ, որոնք Կովկասի սահմանը անցնելով՝ հիւրընկալութիւն գտան

Սակայն ընկերութիւնը չը կորաւ, չը ոչնչացաւ, այլ, ընդհակառակը, ծաղկեց, աճեց, և այսօր մէկին տասն է գործում։ Եւ էլի ողորմելի հակառակորդները ամօթահար լռեցին և միշտ կը լռեն...

—

Նոյնը այսօր կատարվում է Ներսիսեան դպրոցի վերաբերմամբ։ Հանդիստ նստած էին. անում էին ինչ ուզում էին, բերում էին ում ուզում էին, քանդում էին, երբ կամենում էին։

Եւ ահա, երբ ժողովուրդը հրաւէր կարդաց այդ ազգային կապալառուներին՝ դուրս գալ դպրոցից, —բարձրացրին իրանց սովորական աղաղակը, իրանց վայրահաչութիւնները. «Դպրոցը վտանգի մէջ է, եկեղեցին կորստին է մատնում. օգնութեան հասէք. մի թողնէք»։

Սակայն, իզուր։ Նոր տարին դպրոց կը մտնի, բարեխղճութեամբ առաջ կը տանի գործը, արդարութեամբ կը հսկի Ներսէս Աշտարակեցու դպրոցի հիմնարկութեան վրա.—և այդ խառնիճաղանճ աղաղակը կը լռի, լակոտները կը քաշվեն իրանց որջերը, և գործը առաջ կերթայ անարգել, անարկիւղ...

—

Այդպէս է եղել միշտ, այդպէս էլ կը լինի և այժմ։ Ահա թէ ինչու մեզ ծիծաղեցնում է շատերի խօսքը, երբ մեզ ասում են. «ինչու չէք պատասխանում խաւարամիտների անսանձ հայհոյանքներին և խայտառակ ստերին»։

Ինչու պատասխանենք։ Ո՞ւմ պատասխանենք։ Կարծում էք այդ խեղճ մարդիկ իրանք չը գիտեն, որ սուտ են գրում, աղաւաղում են, փաստերը յեղաշրջում են։ Այդ ամենքն էլ լաւ գիտեն. մենք էլ, նրանք էլ, հասարակութիւնն էլ։

Բայց գրում են, որովհետև մտածում են, թէ դրանով կարող են մեղմացնել իրանց խայտառակ պարտութիւնը, կարծում են, թէ դրանով կարող են խաբել մի մարդու, որին ուղղած են իրանց աչքերը։

Իմ ծանօթներից մէկը շատ ճիշդ նկատեց.—այդ բոլորը նրանք գրում են միմիայն Վեհափառի համար, որ կարողանան իրանց կսկորդիլոսի արտասուքներով համոզել Էջմիածնի գահակալին, թէ իրանք սնացել են անարդար կերպով։

—

«Արձագանքի» վերջին համարում տպագրված է մի սուտ լուր, որ իբրև թէ Թիֆլիսի «պատուաւոր» դասակարգը (Պետրոս Սիմոնեան, տէր-Գիւտ, Սպանդարեանց, Սարգիս քահանայ Աղաջանեան, Արգար Յովհաննիսեան, Քարամեան, Մանդակունի քահանայ և ուսուցիչ Զօհրաբեան) ուզում են դիմել Կաթողիկոսին և խնդրել, որ Վեհափառը «ընտրողական իրաւունքը որոշ կարգի ենթարկի»։ Օհո։

Եւ «որոշ կարգը», այդ մարդկանց կարծիքով, այն է, որ ժողովուրդը, իբրև մի անբան անասուն, տանը նստի, իսկ այդ «պատուաւոր» մարդիկ դպրոցը իրանց տունը չինեն և ժողովրդի գլխին կակալ կոտրեն...

Բարի երազ. այդպիսի երազների ժամանակը Մակար Կաթողիկոսի օրով էր.—անցան այն օրերը...

—

Մի ուրիշ երազ։—Անցեալ անգամ մենք հաղորդեցինք, որ եղուիտների բանակը դիտաւորութիւն ունի խնդրելու Կաթողիկոսից, որ նա սահմանափակէ հոգաբարձութեան իրաւունքը։

Մեր հաղորդածը ճշդվեց. «Ոչ թէ միայն հոգաբարձութիւնը, այլ և տեսուչը և ուսուցչական խմբի ամեն մի անդամն անդամ պէտք է հաստատվեն և արձակվեն միմիայն ամենայն հայոց Կաթողիկոսից»,—ասում է «Արձագանքը»։

Իսկ հոգաբարձութիւնը—մի կաստա, որ պէտք է միայն փող հաւաքէ և փող վճարէ տեսչին և ուսուցիչներին։

Ահա խաւարամիտների լոգիկան.—երբ իրանք են հոգաբարձու, պէտք է անսահման լինի հոգաբարձութեան իրաւունքը. իսկ երբ իրանք հոգաբարձու չեն, պէտք է խլվի հոգաբարձութիւնից ամեն մի իրաւունք։ Աֆֆերիմ։

Եւ գիտէք, թէ ինչ է այդ ծիծաղելի պրօէկտի հիմքը,—այն, որ Ներսիսեան դպրոցի այժմեան մի քանի հայկատակ վարժապետներ կարծում են, որ նոր հոգաբարձութիւնը, հէնց որ պաշտօնի մէջ մտնի, իսկոյն իրանց կը վռնդի տեսչի հետ միասին և նոր մարդիկ կը բերի։ Եւ որպէս զի այդ այդպէս չը լինի,—ուրեմն վարժապետների և տեսչի արձակելու գործը Կաթողիկոսին պիտի վերապահել։

Խեղճ մարդիկ. ինչ էք չկլվել, ինչ էք իրարանցումի մէջ ընկել։ Երդվում եմ աստուածներով, որ նոր հոգաբարձուները, ովքեր և լինեն նրանք, այնքան ջենտլմէն կը լինեն, որ ընկեր չեն դառնայ դպրոցի այն վարժապետներին, որոնց արհեստը «ոյժի առաջ մէջք ծռելն» է։ Այդ վարժապետները նոր հոգաբարձութեան օրով «ուրիշ կերպ կը պահեն իրանց», «ուրիշ երգեր կը երգեն»—ուրեմն հեռացնելու կարիք էլ չի լինի, միայն թէ իբրև ուսուցիչ լաւ լինեն։

Իմացաք։

—

Ուրեմն վերջացնենք ընտրողական հարցը, և ինչպէս պօլսեցիներն են ասում,—օն անդր առաջ։

*

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀՈԳԱԲԱԺԻՆՆԵՐ

—

Յունիսի 24-ին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին մի շրջաբերական է ուղարկել, որի մէջ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, այն միտքն է յայտնված, թէ գիւղական դպրոցները պէտք է նպաստեն գիւղատնտեսական գիտութիւնների տարածմանը ժողովրդի մէջ։ Շրջաբերականի մէջ մատնացոյց է արված, որ այն տեղերում, ուր դպրոցներին կից կան բանջարանոցներ և այգիներ, ոչ միայն ուսուցիչները կեանքի լաւ պայմանների մէջ են գտնվում և դպրոցներն ևս հարուստ են միջոցներով, բայց և դպրոցների աշակերտները ընտելանում են գիւղատնտեսական պարապմունքներին, հասակն առած գիւղացիները օգտակար խորհուրդներ են ստանում իրանց տնտեսութիւնների համար, և բացի դրանից, դպրոցական այգիներից և բանջարանոցներից ստանում են սերմեր և պատուաստներ։ Մի քանի տեղերում այգեգործական և պարտիզպանական զբաղմունքները այնպիսի համակրութիւն են զարթեցրել, որ այն դպրոցների համար, որոնք հողեր չունեն, գիւղացիները իրանց միջոցներով են կապալով վերցնում այգիները և բանջարանոցները։

Յոյց տալով մի քանի դպրոցների տուած օգտակար արդիւնքները, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը կանգ է առնում այն փաստի վրա, որ դպրոցների մեծ մասը, որոնք մինչև անգամ հող ունեն և այգեգործութեամբ ու պարտիզպանութեամբ պարապելու համար բարեյաջող պայմանների մէջ են գտնվում, մինչև այժմ չունեն ոչ այգիներ, ոչ բանջարանոցներ, իսկ դպրոցական հողերը կամ դատարկ են մնում կամ ուրիշ պէտքերի համար են գործածվում։ Վերագրելով այդ՝ տեղական դպրոցական իշխանութիւնների անուշադրութեանը դէպի մի գործ, որը թէ տնտեսական և թէ կրթական կողմից մեծ նշանակութիւն ունի, մինիստրը դիմում է դպրոցների ղեկավարներին, առաջարկելով նրանց, որ նրանք միջոցներ ձեռք առնեն՝ դպրոցներին կից այգիներ և բանջարանոցներ չինելու։

Վերջաբանութեան մէջ մինիստրը առաջարկում է գործին նպաստելու համար հրաւիրել տեղական գիւղական և քաղաքային հասարակութիւնները։ Բացի դրանից նա յանձնարարում է ժողովրդական դպրոցների դիրեկտորներին և տեսուչներին, որ նրանք իրանց հաշիւների մէջ տեղեկութիւններ տան այն բանի մասին, թէ հող ունեցող դպրոցներից որոնք ունեն այգիներ, բանջարանոցներ և գիւղատնտեսական ցանքեր, և որոնք չունեն, բացատրելով դրանց պատճառները և ցոյց տալով այդ պատճառները վերացնելու միջոցները։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Յունիսի 24-ին

Յունիսի 22-ին Պավլովսկի կայարանի օրկեստրի բենեֆիսն էր և մեծ բազմութիւն էր հաւաքված։ Տեղացիներիս շատ էր հետաքրքրում այդ ներկայացումն, որովհետև օրկեստրը բաղկացած էր շատ աղանդաւոր և նշանաւոր երաժիշտներից։

Ներկայացմանը մասնակցում էին և երկու հայ արտիստներ՝ երգիչ Շահլամեան և ջութակահար Նալբանդեան։ Կարելի է ասել, որ պ.պ. Շահլամեան և Նալբանդեան իրանց մասնակցութեամբ կրկնապատկեցին օրկեստրի սովորական աջողութիւնը։

Վերջին ժամանակներս Պետերբուրգի լրագրութիւնը մասնացոյց է անում Շահլամեանի արած մեծ առաջադիմութեան վրա, ինչպէս երգեցողութեան, նոյնպէս և երաժշտականութեան մէջ. այդ առիթով մի լրագիր նկատում է, որ հեռու չէ ժամանակը, երբ թատրոնները կը սկսեն միմեանց ձեռքից խլել բնութիւնից օժտված երգչին։

Շահլամեանցը, Պավլովսկի կայարանի ներկայացմանը ապացուցեց, որ արժանի է այդ բոլոր գովասանքներին։ Պարոնի այդ երեկոյեան ունեցած աջողութիւնը մի արտասովոր բան էր. մասնակցող երգիչների մէջ նա առաջին տեղը բռնեց։ Դուլուսսկիի «Ռոմանս» նոր օպերայից երգած արիան մեծ յաջողութեամբ ընդունվեց հասարակութեան կողմից։ Ժողովրդի թախանձանքով՝ երգիչը ստիպված էր հինգ թէ վեց անգամ երգելու։

Պ. Նալբանդեանը նուագեց Վիէթանի 4 համերգը։ Այդ բաւականին դժուար, մեծ տեխնիկա և շնորհք պահանջող պիեսայի անպայման աջողակ կատարելովը պարոնը ցոյց տուեց հասարակութեան, որ բացի տաղանդից ունի և լուրջ երաժշտական պատրաստութիւն, ցոյց տուեց, որ զուր չէ աշակերտել հռչակաւոր պրոֆեսոր Աուէրի մօտ և մեծ աջողութեամբ կարողացել է սեփականացնել իրան այդ եզակի ջութակահարի նուագելու ամենալաւ յատկութիւնները։ Պետերբուրգի զարգացած հասարակութիւնը ըստ արժանոյն վարձատրեց երիտասարդ արտիստին բուռն ծափահարութիւններով և անվերջ bis-երով։ Ամբողջ սրտից ուրախ ենք երկու արտիստների աջողութեան համար։

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 29-ին

Իր 72-րդ համարում «Արձագանքը» ասում է, թէ Քամոյենց եկեղեցում կատարվող պատգամաւորական ընտրութիւններին ինքնագլուխ կերպով առաջ են եկել ձայներ ստուգելու և գրելու համար պ.պ. Ա. Մովսիսեան և Գ. Վարդանեան, և թէ նախագահ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեան մի անդրագէտին ասել է, որ նա գրել տայ այն ազգանունները, որոնց համար ինքն նրան տպած տոմսակներ է ուղարկել։

Այս տեղեկութիւնը միանգամայն անճիշդ և յեժայից ընկնելով հովիւը նկատելով, որ պէտք է սատկի՝ կորում է նրա գլուխը և պատահածի մասին լմաց է տալիս գիւղի տանուտէրին։ Մասին լմաց է տալիս գիւղի տանուտէրին։ Մասին լմաց է տալիս գիւղի տանուտէրին։

զաթիւրված է։ Նախ՝ ձայներ ստուգելու և գրելու համար ծխականների ժողովը նշանակեց պ. Մովսիսեանին և Կիրակոսեանին։ Ուրեմն ես չեմ եղել ձայներ ստուգողը և գրողը։ Այս յանդուգն սուտը արդէն ցոյց է տալիս, թէ որքան խարդախ պիտի լինի «Արձագանքի» այն յօդուածագիրը, որ իբր թէ կատարված ընտրութիւնների մի պատկեր և ներկայացնում։ Անդրադէտների համար Քամոյենց եկեղեցու ծխականները նշանակեցին ինձ և պ. Մելիք Բախտամեանին։ Անդրադէտների թուում, որ հնչին էր, գտնվեց մէկը, որ նախագահին, ինձ, պ. Մելիք-Բախտամեանին և ուրիշներին դիմելով՝ տրտնջալով կրկնում էր, որ ինքը ոչ ոքին չէ ճանաչում և ոչ ոքի ազգանունն էլ չը գիտէ։ Ամենքն էլ պատասխանեցին, որ այդ իրանց չէ վերաբերում, և այդ լսելուց յետոյ անդրադէտը հեռացաւ և էլ չերևաց։ Իսկ նախագահ տէր-Յովհաննէսը ուրիշ ոչինչ չէ խօսել այդ անդրադէտի հետ, և պէտք է խոստովանած, նախագահում էր ընտրութեանը ամենայն ճշդութեամբ և օրինաւորութեամբ։

Ով ճանաչում է «Արձագանքի» ոգու և դիտումների սև գոյնը, որ նա արտայայտեց հոգաբարձական պատգամաւորների ընտրութեան առիթով, ես նրան եմ թողնում դատելու, թէ այս լրագրի տուած տեղեկութիւնը ուրիշ եկեղեցիներում կատարած ընտրութիւնների մասին որքան անճշդութիւններ պիտի պարունակի։ Ես կարծում եմ, որ փաստերը սանձարձակ կերպով յեղաթիւրելով, առանց միջոցների խտրութեան, «Արձագանքը» իր դէմ յարուցանում է զղջանք և ատելութիւն նոյն իսկ իր բաժանորդ ընթերցողների մէջ։ Ձեր անզուսպ կիրքը, պարոններ, հասարակութեան համար հասկանալի է։ Իսկ ձեր ապականիչ դիտումների վրա յարձակվող անձանց անուանարկելը և փաստեր յեղաթիւրելը,—այդ ձեր փեչակն էք զարձրել։ Դուք պէտք է վերջ դնէք այդ այլանդակ գործին, որ ձեզ արդէն անդունդ է գլորել։

Գ. Վարդանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութեան օրով, դպրոցի կասսայից պակասել է 3,000 բուբլի փող։ Հանգուցեալ Մակար կաթողիկոսը կարգադրել էր, որ հոգաբարձութիւնը գտնի և լրացնի այդ կորած գումարը։ Հետաքրքրական է իմանալ, ինչ եղաւ այդ 3,000 բուբլու պատմութիւնը և ինչով պէտք է վերջանայ այդ հարցը։

—

Վանի վիլայէթում ևս, ինչպէս մեզ տեղեկացնում են Վանից, հացի գինը սկսել է փոքր առ փոքր իջնել։

—

Լսում ենք, որ Վեհափառ Կաթողիկոսը թոյլատրել է, որ Սարգիս քահանայ Բէգնազարեանի «Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն» դասագիրքը գործադրվի հայոց դպրոցներում իբրև ձեռնարկ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Թեմի Թեմական տեսուչ Մելեան քահանան դիմել է Էջմիածին, հարցնելով թէ արդեօք եկող ուսումնական տարին՝ ուսուցիչները և վարժուհիները պէտք է մնան իրանց տեղերում, թէ փոփոխութիւններ պէտք է լինեն։ Այդ հարցի պատասխանը շատ կարևոր է, որովհետև դա վերաբերում է գլխաւորապէս այն ուսուցիչներին և վարժուհիներին, որոնք դեռ ցէնզ չեն ստացել։

—

Մեզ հաղորդում են, որ Ստամբօլոլ քաղաքի հայերը մտադրութիւն ունեն բանալու այդ քաղաքում հայոց բարեգործական ընկերութեան մի ճիւղ, և այդ նպատակով արդէն դիմել են Թիֆլիս, ընկերութեան խորհրդին։

—

Մեզ հաղորդում են, որ վաղը, կիրակի օր, յուլիսի 3-ին նշանակված է վերընտրութիւն Թիֆլիսի երկու եկեղեցիներում, այն է Մողնու և Զրկինանց եկեղեցիներում։ Զարմանում ենք, որ այդ մասին Թիֆլիսի կոնսիստորիան չէ յայտարարում լրագիրներում։ Ցոյս ունենք, որ դէթ այս անգամ թեմական առաջնորդը կը կարգադրի, որ ժողովի ժամանակ յայտնվեն ընտրութիւնների բեկման պատճառները։

—

Յունիսի 30-ին, առաւօտեան 7 ժամին, Կովկասեան կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շիրեմետեվ ճանապարհ ընկաւ դէպի Կիսլովոդսկ։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվել է Հրատարակչական ընկերութեան տպագրած երկու նոր գրքոյկ. 1) «Երկու հեքիաթ» Կարմէն Սիլվայի. թարգմանութիւնը կատարված է ռուսերէնից սահուն լեզուով, և 2) Անդերսէնի «Անճառնի Բաղիկը», մանկական ընթերցանութեան համար։ Առաջին գրքոյկը արժէ 10 կոպէկ, իսկ երկրորդը 5 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Էջմիածնեցոց եկեղեցու ծխականների մէջ մեծ գժգոհութիւն է տիրում Սարգիս քահանայ Աղաջանեանի դէմ, որը իրան թոյլ է տուել յանդուգն կերպով վիրաւորել բոլոր ծխականներին, առաջնորդին տուած զեկուցման մէջ։ Ծխականները մտադիր են բողոք ներկայացնել հոգևոր իշխանութեան, պահանջելով, որ այդ քահանան ըստ արժանոյն պատժվի։

—

Ներքին գործերի մինիստրութեան բժշկական խորհուրդը մշակել է կանոններ ժանտախտի տարածման դէմ առնելու միջոցների մասին։ Ժանտախտը այժմ սպառնում է Չինաստանին սահմանակից տեղերին, այն է՝ Հարաւային-Ուսուրիական երկրին և Արևելեան Սիբիրին։

—

Անցեալ համարում հաղորդեցինք, որ «Վլադիմիր» շոգենաւի խորտակման պատճառով, Սև ծովին դոհ գնաց հարուստ Գրիգոր Թումաեվ։ Բաղուից մեզ գրում են, որ դա ոչ թէ ցորենավաճառ Թումայեվն է, այլ յայտնի նաւթարդիւնաբերող և շոգենաւատէր Գրիգոր Թումաեվ, շուշեցի, որ նորերս ընտրված էր Մարդասիրական ընկերութեան խորհրդի նախագահ։ Հանգուցեալը իր կնոջ և երեխաների հետ Վիեննա էր գնում բժշկվելու։ Խորտակման ժամանակ, որպէս հաղորդում են, ինքը, կինը և երկու երեխան խեղդվել են. ազատված են մի աղջիկ և մի տղան։ Ասում են, որ նրա մարմինը կը փոխադրվի Բաղու։ Թիֆլիսում տեղեկութիւն է ստացված, որ Եւդատորիայի մօտ գտնվել են երկու կանանց դիակներ, որոնցից մէկը տիկին Աննա Կորդանովան է, որի մասին հաղորդեցինք։ Յէնդոր Շուլց, որը նոյնպէս գնում էր «Վլադիմիր» շոգենաւով և որի մասին ոչինչ տեղեկութիւն չը կար, ենթադրում են, որ Բաթումից Օդէսա գնալիս՝ ճանապարհին ափ է իջել։ Նոյն բանը յայտնի է Աբբենին և Ֆօրկատտի արտիստների մասին։ Իսկ «Тифл. Листокъ» լրագիրը իր երեկվայ համարում տպել է Օդեսայից ստացած հետեւեալ կարճ հեռագիրը. «Ազատված են 91 ճանապարհորդներ և 39 հոգի շոգենաւի ծառայողներ. խեղդվեցին 55 անձինք. մինչև երեկվայ օրը ափ են դուրս գցված տասը դիակներ։ Խորտակվող շոգենաւին օգնութիւն էր հասցնում իտալական «Կոլումբիա» շոգենաւը և պատահմամբ անցնող ռուսական «Սինէուս» շոգենաւը։ Կատարելապէս արժանահաւատ մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, Օդէսայից գնացած ջրասոյները շարունակում են աշխատել, բայց համարեա առանց հետևանքի, որովհետև մինչև այժմ նրանք չեն կարողանում մտնել նաւախցերը։»

—

Երէկ, յուլիսի 1-ին, հետեւեալ պաշտօնական հեռագիրն է ստացվել «Վլադիմիր» շոգենաւի խորտակման մասին։ «Վլադիմիր» շոգենաւը յունիսի 27-ին, գիշերվայ 1 ժամին, անցնելով 35 մղոն Տարխանկուտից դէպի Օդէսա՝ ընդհարվեց իտալական «Կոլումբիա» շոգենաւի հետ։ «Վլադիմիր» շոգենաւի վրա կային 142 ճանապարհորդներ և 52 նաւաստիներ։ Մօտ եկող «Սինէուս» և «Կոլումբիա» շոգենաւերը ազատեցին և Օդէսա հասցրին 91 ճանապարհորդներ և 39 նաւաստիներ։ Խեղդվողների թիւը 55 են հաշուում, որոնցից ինն դիակներ բերված են Օդէսա, որոնց թուում և կոմսուհի Բաշմէն, Շեստակով։ Պոստը և դրամական ծրարները կորան։

—

Կառավարական սենատը սկզբունքով մի հարց է վճռել, այն է՝ մեչչանների աւազներին ռոճիկ տալու հարցը։ Օրէնքով. մեչչանների աւազը, որպէս հասարակական պաշտօն կատարող անձը, չը պէտք է որ և է վարձատրութիւն ստանայ։ Իսկ եթէ հասարակութիւնը հնարաւոր կը համարի մեչչանների աւազին որ և է ռոճիկ նշանակել, այն ժամանակ այդ բանի մասին կազմած համախօսականը, որին կցված պէտք է լինի և ռոճիկ տալու աղբիւրը, պէտք է առաջարկվի ներքին գործերի մինիստրի հաստատութեան, առանց որի համախօսականը օրինական ոյժ չէ կարող ստանալ։ Ներկայումս սենատը հետեւալ կարգն է հաստատել։ Մեչչանների իւրաքանչիւր հասարակութիւն կարող է ռոճիկ նշանակել իր աւագին և՛ ներքին գործերի մինիստրութիւնից չը հաստատված համախօսականով, միայն այն դէպքում, երբ այդ ռոճիկի վճարումը յանձն են առնում այն անձինք, որոնք մասնակցել են համախօսականը կազմելուն։

—

Այս օրերս Պետերբուրգում կարգադրութիւն է եղել, որ Պետերբուրգի զինուորական շրջանի բոլոր զօրամասերի զինուորների համար թէյարաններ բացվեն։

—

«Правит. Вѣстникъ» լրագրում տպված է հետեւալը. «Պետերբուրգում, յունիսի 21-ից մինչև 22-ը խօլերայով հիւանդացել են 18, մեռել են 5, մնացել են 28 հիւանդներ։ Կրոնշտատ քաղաքում յունիսի 19-ից մինչև 22-ը հիւանդացել են 18, մեռել են 14, առողջացել են 2 հոգի։—Շվէդական կառավարութիւնը խօլերայով վարակված է յայտարարել, այս յունիսի 18-ից, Ռուսաստանի բոլոր տեղերը, բացի Ֆինլանդիայից և Բալտեան երկրի նահանգներից։ Յունիսի 19-ից մինչև 1-ը Պետերբուրգ քաղաքի զանազան մասերից քաղաքային հիւանդանոցը մտել են 15 տղամարդիկ և 6 կանայք խօլերայով հիւանդներ։—Սամսօնում, ասիական Թիւրքիայում, յունիսի 6-ին խօլերայով հիւանդացան 2, մեռաւ 1 հոգի։ Եօզղատում, յունիսի 5-ից մինչև 7-ը հիւանդացան 46, մեռան 16 հոգի, Կիր-Շէխիրում յունիսի 6-ից մինչև 7-ը հիւանդացան 30, մեռան 15։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են. «Այս օրերս հայոց ուսումնարանի շինութեան մէջ պատահեց մի գողութիւն. այնտեղ ապրող ծերունի տէր-Նշան քահանայի սենեակից գողացված է 200 բուբլի։ Կասկածը ընկնում է սպասաւորների վրա։ Հասարակութեան մէջ ցանկութիւն կայ այդ գումարը հանդանակել և տալ նրան, որովհետև դա ծերունի քահանայի խնայած ամբողջ հարստութիւնն է»։

—

Հին-Նախիջևանի դաւառի ՏԱՆԱԿԵՐՏ գիւղից մեզ գրում են. «Վեց ամիս է արդէն մեր գիւղում, որ գտնվում է Ադուլիսից 4 վերստ հեռու, մուրք է գործել տիֆը։ Շնորհիւ բժ. Շահպազանի, շատ վնաս չը կարողացաւ տալ, բայց և այնպէս էլի մի քանի զոհեր տարաւ։ Թիւս որոց, վերջին օրերս, Քրիստափոր Իսաղուլեանցին, որ երէցփոխ հոգաբարձու էր և բաւականին ծառայութիւն է մատուցել գիւղի ուսումնարանին։ Իսկ Քաղաքիկ գիւղում բդացաւ կայ փոքրների մէջ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ալաշկերտից գրում են. «Սերմի խնդիրը շատ կենսական է, այնպէս որ շատեր հեռու տեղերէ մէկ քիլէն կէս լիրայի կորեկ բերին ցանեցին, որովհետև մէկ քիլէ կորեկը տասը քիլէ ցորենի չափ արտ մը կը ցանուի և արդիւնքն ալ այնքան է։ Ալաշկերտի հունձքերը առատ բերք կը խոստանան, նոյնպէս Բասէնի և Կարինի դաշտի ցանքերը, վատն դի մինչև օրս խիստ լաւ նպաստաւոր անձրևներ եկան. միմիայն Բասէնի քանի մը գիւղերը աշնան ցանուածքները կորուած էին։ Ի Բասէն ցորենի քիլէն 40 դահեկանի իջաւ, և Էրզրում 30—35 դահեկանի։ Հացի հին հօխան 50—70 փարայի կը ծախուի. յոյս կայ օրէ օր իջնալու, զի Տրապիզոն և Պայպուրդ դանուած մեծաքանակ ալիւրները հեռոհետ կուգան։ Կարսէն 4,000 պարկ սահմանագլխի վրա Քեօթէկ գիւղը եկած է, ուսկից հոս պիտի փոխադրեն»։

Էրզրումից յունիս 4/16 գրում են. «Երկրագործական կացութիւնը որ այս վերջին երկու տարիները շատ ողորմելի եղաւ, վերջապէս կը սկսի յուսադրել մեզ թէ ի մօտոյ պիտի աղատինք տիրող սովէն։ Գարնան ցանքը գոհացուցիչ պայմաններու մէջ կատարուեցաւ, մանաւանդ Բասէն գաւառին և Էրզրումի դաշտին մէջ։»

«Մինչև ցարդ, աշնան և գարնան ցանքերը առանց բացառութեան աղէկ երևոյթ ունին, և եթէ ասկից մինչև տասնհինգ օր երկու երեք անգամ ալ անձրև տեղայ, այն ատեն ապահով կըրնանք ըլլալ թէ այս տարուան հունձքը յաջող պիտի ըլլայ։ Արմտիքներու արդի գինը երթալով կիջնայ։

ԿԱԶԻՄԻՐ ՊԷՐԻԷ ԵՒ ԱՐՄԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Աշխարհիս ամբողջ լրագրութիւնը ներկայումս զբաղված է Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնօի ողբերգական մահվան, նրա թաղման մանրամասնութիւններով և նորընտիր նախագահ Կազիմիր Պէրիէի անձնաւորութեամբ։ Այս մի քանի շաբաթվայ ընթացքում Ֆրանսիայում այնպիսի անսպասելի փոփոխութիւններ տեղի ունեցան, որոնք անպատճառ իրանց ազդեցութիւնը կը գործեն Ֆրանսիայի թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան վրա։

Ֆրանսիական նոր նախագահը, որպէս և Կարնօն, պատկանում է քաղաքական գործիչների սերընդին. նա թոռն է և որդի նշանաւոր մինիստրների։ Համեմատաբար երիտասարդ—նա 47 տարեկան է—եռանդոտ, խելք և տաղանդաւոր Կազիմիր Պէրիէ հաղիւ թէ համաձայնվի իր նախորդի դերը կատարել։ Նա կը կամենայ և կարող է աւելի գործունեայ դեր խաղալ Ֆրանսիայի կառավարչական գործերում։ Թէպէտ և նա համոզված հանրապետական է, բայց յայտնի է դէպի Օրլէաններն իր ունեցած համակրութեամբ, և արմատականների կուսակցութիւնը, որ դեռ շատ զօրեղ է Ֆրանսիայում, նրան իր երդուեալ թշնամի է անուանում։

Այժմ երրորդ հանրապետութեան պատմութեան մէջ մի նոր շրջան է սկսվում։ Ամենը միմեանց հարց են տալիս, թէ ո՞րպէս կընթանայ Ֆրանսիայի նոր քաղաքականութիւնը Կազիմիր Պէրիէի գլխաւոր ղեկավարութեամբ։

Ընդհանուր կարծիքն է, որ նոր նախագահի գործունէութեան եօթնամեայ շրջանը աչքի կընկնի իր զօրեղ և հաստատուն քաղաքականութեամբ, որի նպատակը կը լինի պաշտպանել խաղաղութիւնը երկրի ներսում, և ամենալաւ յարաբերութիւններ հաստատել օտար պետութիւնների հետ։

Այդ բանը շատ լաւ հասկանում են արմատականները և սոցիալիստները, որոնք այժմեանից իսկ անխնայ պատերազմ են յայտարարում Պէրիէին։ Սոցիալիստական կուսակցութեան պատկանող պատգամաւորները մի շրջաբերական են հրատարակել, որի մէջ սաստիկ յարձակվում և հայհոյում են նոր նախագահին և Դիւպիւին։ Այդ շրջաբերականի մէջ նոր կառավարութիւնը յետադիմական է հռչակվում, իսկ ինքն Կազիմիր Պէրիէ՝ Օրլէանների ծառայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Բէյտէրի» գործակալութեանը հեռագրում են Լօնդօնից, որ սէր Հէնրի Լէյարդ, հռչակաւոր քաղաքագէտը և ճանապարհորդը Արևելքում, վախճանվեց։

—Հեռագիրը հաղորդեց արդէն, որ Լիվօրնօում մի անարխիստի դաշոյնի զոհ գնաց իտալական «Gazetta Livornese» և «Telegrapho» լրագիրների խմբագիր Բանդի։ Այժմ լրագիրները մի քանի կենսագրական տեղեկութիւններ են հաղորդում նրա մասին։ Ջուզէպէ Բանդի՝ Գարիբալդիի հռչակաւոր հաղարից մէկն էր։ Նա մասնակցել էր Գարիբալդիի բոլոր արշաւանքներին. անթիւ անգամ վիրաւորված է եղել, այնպէս որ նրա ամբողջ մարմինը հին վէրքերից մնացած սպիներով էր ծածկված։ Նա հրատարակում էր «Gazetta Livornese» մօտ 12 տարի, այն ժամանակից, երբ այդ լրագրի նախկին խմբագիր Ֆերէնդզօնա համարեա նոյնպիսի հանգամանքներում դաշոյնի զոհ գնաց։ Իր յօդուածների շնորհով, Բանդի մեծ ազդեցութիւն ունէր ամբողջ Լիվօրնօ նահանգում և մինչև անգամ Իտալիայում։ Թէ անարխիստները և թէ յետադէմները նրան ատում էին։ Դրանց բոլորի դէմ նրա լրագրի մէջ շատ խիստ մեղադրական յօդուածներ էին գրվում։ Բանդիի վէրքը մահացու էր։ Վիրաւորվելուց երեք ժամ յետոյ Բանդի մեռաւ։

—Պարիզից հեռագրում են, որ մինիստրների խորհրդի նիստում Պէրիէ, իր ընտրութեան առիթով, ներումն շնորհեց 374 անձանց, որոնք

դատապարտված էին գործադուլների և ուրիշ յանցանքների համար։ Անարխիստներից ոչ մէկին նեռումն չէ շնորհված։

—Հռոմից հեռագրում են, որ իտալական մինիստր-նախագահ Կրիսպի սպառնական նամակներ է ստանում անարխիստներից և տանից միշտ դուրս է գալիս գաղտնի ոստիկանների ուղեկցութեամբ։

—Պարիզից հեռագրում են յունիսի 23-ին (յուլիսի 5-ին), որ Բիւրդօ՝ պատգամաւորների ժողովի նախագահ է ընտրված 259 ձայնով Բրիսոնի դէմ, որը ստացաւ 157 ձայն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կաթոլիկական ոգին, որը շատ անգամ ֆանատիկոսութեան է հանում, դեռ ևս շատ զօրեղ է մինչև անգամ այնպիսի ազատամիտ երկրում, որպէս Ֆրանսիան է։ Բրէտօնցիների ընկերութիւնը Պարիզում մտադրվեց Բընանի համար արձան կանգնեցնել Տրէգիէում, այն քաղաքում, որտեղ ծնվել է մեծ գիտնականը։ Այդ նպատակով սկսած ստորագրութիւնը շատ աջող հետևանքներ ունեցաւ, պահանջված գումարը պատրաստ էր, բայց յանկարծ մի անակնկալ խոչնդոտ յայտնվեց։ Տրէգիէի քաղաքային խորհուրդը շատ ազատամիտ և հանրապետական է համարվում, բայց հասարակական կարծիքի ճնշման տակ, որը մինչի ածմս էլ Բընանին համարում է սատանայի ներկայացուցիչ երկրիս վրա, նա ստիպված էր մերժել արձան կանգնեցնելու նախագիծը անորոշ ժամանակով։ Այդ փաստը յիշեցնում է նորերս եղած դէպքը Սէն-Բրիէնում, ուր քաղաքային իշխանութիւնը չը համարձակվեց անուանել փողոցներից մէկը Բընանի անունով։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունիսի։ Միացեալ-Նահանգներում տեղի ունի երկաթուղիական բանուորների մի անսովոր գործադուլ։ Նախագահ Կլիվլէնդ մի պրոկլամացիա հրատարակեց, որով պահանջում է վերջ տալ գործադուլ անողների ժողովներին։ Իլինոյսում զօրեղ յուզմունք է նկատվում ածխահանքերի բանուորների մէջ։ Վէստվիլում ածխահանքաբանուորները բռնեցին Չիկագո գնացող երկաթուղիական գնացքը։ Գործադուլ անողների առաջնորդ Դէբս կալանաւորված է, մեղադրվելով դաւադրութեան մէջ։ Գնացքների երթևեկութիւնը կրկին սկսվում է։ Վաղը սպասվող մեծ գործադուլը ի նկատի ունենալով, կանոնաւոր զօրքերը շարունակում են դալ։ Կալիֆորնիայում դրութիւնը շատ վտանգաւոր է։ Վեց զօրաբաժիններ շոգենաւով ուղարկված են Սան-Ֆրանցիսկոյից Սակրամէնտո. զօրքերը իրանց հետ տանում են Գատլինդի թնդանօթները և արտիլերիական բատարէաներ։ Գործադուլ անողները պատասխանեցին պաշարմանը։ Նրանք ունեն 1500 հրացաններ և շատ ատրճանակներ։

ՍՕՖԻԱ, 29 յունիսի։ Պրինց Ֆերդինանդը ճանապարհ ընկաւ դէպի Վիէննա։

ՊԱՐԻԶ, 29 յունիսի։ Անարխիզմը արմատախիլ անելու համար կայացած միջազգային համաձայնութիւնը բաւարար կը համարվի ոստիկանական միջոցները։ Անարխիստները կը գտնվեն ոստիկանական մշտական հսկողութեան տակ, իսկ օտարերկրացի անարխիստները կուղարկվեն իրանց հայրենիքը։ Շվեյցարիան լաւ է վերաբերվում այդ նախագծին. Իտալիան դէմ է դրան։ Այդ միջոցները կը գործադրվեն ներկայ տարվայ հոկտեմբերից վաղ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունիսի։ Հրատարակված է Ռուսաստանի և Ասիա-Ռընդարիայի մէջ կապված դաշնագիրը, որ այժ կը տանայ 1894 թվի յուլիսի 1-ից մինչև 1903 թվի 18/31 դեկտեմբերը։

ԲԵՐԼԻՆ, 30 յունիսի։ Վերացվում է 1879 թվի յունիսի 14-ին սահմանված՝ անցագիրների պարտաւորիչ վաւերացումն ռուս եկողների համար։

ԲԱՐՑԵԼՕՆԱ, 30 յունիսի։ Liceo թատրոնում յանցաւոր փորձ անելու վերաբերեալ գործի քննութեան ժամանակ, Սալվատոր խոստովանվեց, որ ռումբ գցեց։

ՀՌՕՄ, 30 յունիսի։ Պատգամաւորների ժողովը քուէարկեց հասարակական ապահովութեան արտակարգ միջոցներ անարխիստների դէմ։—Պաշտօնապէս հերքվում է պապի հիւանդութեան մասին տարածված լուրը։

ԵՕԿՕՀԱՄԱ, 30 յունիսի։ Եապօնիան հրաժարվում է դուրս բերել իր զօրքերը Կորէյից։ Չինաստանի հետ պատերազմը անխուսափելի է։ Եապօնական կառավարութիւնը վարձից 16 շոգենաւեր, 10,000 եապօնացիներ արդէն ավ իջան Կորէյում, բացի դրանից նրանք պատրաստ ունեն զօրեղ օդնական զօրքեր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, յուլիսի 1-ին։ Առաջին ներքին փոխառութեան տոմսերի խաղարկութեան ժամանակ գլխաւոր գումարները տարան հետևեալ տոմսերը։

№ սերիայի	№ տոմսի	Գումարը	№ սերիայի	№ տոմսի	Գումարը
5,357	44	200,000	11,518	28	1,000,000
4,283	1	75,000	14,307	36	
2,460	20	40,000	11,472	7	
13,380	39	25,000	2,599	14	
9,344	47	10,000	2,134	8	
16,220	28	10,000	11,538	11	
3,908	12	10,000	19,851	5	
5,999	4	8,000-ական	15,848	3	
11,344	25		9,772	38	
5,784	34		8,716	11	
11,012	21		18,594	48	
15,369	10		4,986	3	
10,786	14	5,000-ական	17,801	5	
15,564	5		6,087	25	
5,856	30		14,846	39	
2,185	21		3,432	18	
19,437	17		15,010	37	
11,814	27		12,287	13	
10,648	12		10,653	17	
9,362	31		3,067	5	

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԴՈՒԵԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ
ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
այժմ բնակվում է Ձավճավաձէվսկի փողոցում, Թումանցի տանը № 14
(№ 75) 1—3

Սրբազան առաջնորդի հրամանով յուլիսի 3-ին, կիրակի, առաւօտեան 11 ժամին նշանակված է Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան եօթն պատգամաւորների ընտրութիւնը. ուստի խնդրում եմ յիշեալ եկեղեցու ծխականներին շնորհ բերել նշանակեալ օրը և ժամին յիշեալ ուսումնարանի դահլիճը՝ ընտրութեանը մասնակցելու համար։

Մի և նոյն օրը, և նոյն ժամին կը լինի Քարափի ս. Գէորգ եկեղեցու երէցփոխանի ընտրութիւնը Քարափի եկեղեցում։

Գործակալ եկեղեցեաց հայոց ա. մ. Տիփխոյ՝ Գիւտ քահ. Աղամեանց 1—1

Ի. Ե. Ա. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ

Ցանձն է առնում ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստանում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։

Այն անձինք, որոնք չունեն հաշւապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշւապահութիւն, կարող են ունենալ ՃԻՇԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում։

Ուսուցանում է։

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Վճար { Հաշւապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՌՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՌՈՒԲԼԻ

Պարապմունքներ լինում են ամեն օր, երիս ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։ (№ 16) (2) 20—100

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ դպրոցների համար գիւղերում՝ հարկաւոր են Դ. դասակարգի ուսուցիչներ։ Ռոճիկը՝ ըստ առաջին կոպարի։ Բացի դրանից տրվում է նաև ճանապարհածախս, բնակարան, փայտ և ծառայ։ Ցանկացողները թող դիմեն ինձ, Շամախի։

2—3 (№ 74) Թեմական տեսուչ՝ Եղիշէ քահ. Դեղամեանց

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամեն այն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նադօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանոզների բանկային դրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

№ 62 9—32

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-Ն Յունիսի 1894

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բաղուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	67,541—24	122,774—73	190,315—97
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	380,562—23	342,400 —	722,962 23
3. Զեղչ. (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	3,345,225—93	1,201,745—22	4,546,971—15
4. Զեղչ. մուրհ. մի ստոր. ապահ. տոկոս. թղթ.	40,000 —	— —	40,000 —
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	95,288—34	11,062—49	106,350—83
6. Փոխատուութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	926,000—67	593,547—83	1,519,548—50
բ) » ոչ ապահ. » »	182,455 —	16,245 —	198,700 —
գ) ապրանքների	68,891 —	567,468 74	636,359—74
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	32,530—66	32,530 66
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	690,925—88	62,521—19	753,447—07
8. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի	228,206—45	— —	228,206—45
9. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	33,945—74	4,734—26	38,680 —
10. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	6,086,068—51	— —	6,086,068—51
բ) Բանկի հաշիւը (Nostro)	6,334,479—13	— —	6,334,479—13
11. Բաժինների հաշիւը կենտր. վարչ. հետ	1,364,750—94	— —	1,364,750—94
Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	255,744—62	255,744 62
12. Գնումն և վաճառ. արժեթղթ ըստ յանձնար.	46,750 —	— —	46,750 —
13. Պայմանաժամն անցուցած փոխատուութիւն.	28,355 —	13,700 —	42,055 —
14. Բողոքված մուրհակներ	3,025 —	3,500 —	6,525 —
15. Ընթացիկ ծախսեր	32,165—68	17,651—38	49,817 06
16. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	3,423—96	2,782—86	6,206—82
17. Յետ ստացուելիք ծախսեր	7,310—42	2,704—99	10,015—41
18. Անշարժ կալուածք	— —	48,622—65	48,622—65
Ր. Ա.	19,965,371—12	3,299,736—62	23,265,107—74

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բաղուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	228,279—85	— —	228,279—85
3. Դրամական աւանդներ՝			
ա) Պայմանաժամով	3,584,038 —	538,390 —	4,122,428 —
բ) ց՝Պահանջ	255,448 —	130,340 —	385,788 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	1,063,871—38	948,978—85	2,012,850—23
դ) » » պայմանաւոր.	— —	156,554—17	156,554—17
4. Մասնաւոր հաշիւ պետ. բանկայի Թիֆլ. բաժն. ապահովված մուրհակներով	— —	— —	— —
5. Զեղչումն մուրհակների պետական բանկի Թիֆլիսի բաժնի	249,400 —	— —	249,400 —
6. Թղթակիցներ՝	— —	— —	— —
ա) Նոցա հաշիւը (Loro)	6,611,138 77	— —	6,611,138—77
բ) Բանկի հաշիւը (Nostro)	6,444,689—60	— —	6,444,689—60
7. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	1,383,168—48	1,383,168—48
Կենտրոն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	255,965—44	— —	255,965—44
8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը	11,080—32	— —	11,080—32
9. Զը վճարուած տոկոսներ, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	85,668—71	22,025—89	107,694—60
10. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	134,865—73	80,507—10	215,372—83
11. Փոխանցիկ գումարներ	40,925—32	39,772—13	80,697—45
12. Բողոքված մուրհակները	— —	— —	— —
13. Արդիւնք 1893 թ.	— —	— —	— —
Ր. Ա.	19,965,371—12	3,299,736—62	23,265,107—74

Дозволено цензурою, Тифлисъ, 1 Іюля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.